Հավելված
Արզնի համայնքի ղեկավարի
2022 թվականի մարտի 4-ի թիվ 41 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթներ Արզնիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

1.Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1)

Գործառույթներն են՝

-իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.

-իրականացնում է վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիք հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.

- վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հող օգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ,

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) առնվազն միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի,

2) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հողային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2022 թվականի ապրիլի 18-ին ժամը 11:00 Արզնի համայնքապետարանի շենքում (գ.Արզնի):

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս),

2)տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող

պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին։
3) արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
4)մեկ լուսանկար 3x4 սմ չափի
5)անձնագրի պատճենը:
Փաստաթղթերը ընդունվում են Արզնիի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. +374 22 94 880 կամք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք
Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾ Հ բաժնում, հեռ. 0223 23413, ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից։
Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2022 թվականի ապրիլի 04-ը, ժամը 17:00: